



ՏՕՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Յիշատակ Եղիա Մարգարէի հրեղէն կառքով երկինք վերանալուն (ճաշոց էջ 363)



ԺԱՄԱՄՈՒՏ

Ասոր համար մենք կը դաւանինք Սուրբ Յոզիս միացած Յօր՝ եւ անբաժանելի Որդիէն, եւ կը հայցենք քեզմէ, ո՛վ երկնային պարգեւատու, որ հոգեւոր խաղաղութիւնդ տաս մեզի: Փառք քեզի, ՏԷ՛ր:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ - ԱՁ.

Անբաժանելի Երրորդութիւն եւ երկնային գօրութիւն, որ աշխարհի վրայ ծագեցաւ. փառաբանենք Չինք օրհներգութեամբ:

Ճշմարիտ Ս. Յոզիս այսօր երկինքէն իջաւ եւ հանգչեցաւ առաքեալներուն վրայ. փառաբանենք Չինք օրհներգութեամբ:

Որ փրկական խորհուրդով, այսօր առաքեալներուն վրայ իջնելով, յայտնուեցաւ մարգարէին. փառաբանենք Չինք օրհներգութեամբ:

ՄԵՍԵՂԻ (Սղ. 76, 16. 2)

Ամպերը որոտացին, որովհետեւ քու նետերդ սլանալու սկսան եւ քու կառքիդ անիւներուն դղրդոցէն որոտացին:

Ձայնս Աստուծոյ բարձրացուցի, ձայնովս առ Աստուած աղաղակեցի եւ Աստուած նայեցաւ ինծի:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԻՍԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Ս. Պօղոս Առաքեալի Կորնթացիներուն ուղղած Ա. Թուղթէն Է ընթերցուածը.
(Ա. Կոր. 2, 6-15)

Յառաջադէմներու հետ իմաստութեամբ կը խօսիւք, սակայն ոչ այս աշխարհի իմաստութեամբ, ո՛չ ալ այս աշխարհի իշխաններու իմաստութեամբ, որոնք սահմանուած են կորուստի: Կը խօսիւք ընդհակառակն Աստուծոյ իմաստութիւնը, խորհրդաւոր եւ թաքնուած, զոր Աստուած ամէն յաւիտեակականութենէ առաջ սահմանած էր մեր փառքին: Աշխարհի իմաստունները չկրցան զայն ճանչնալ: Եթէ ճանչնային, փառքի Տէրը չէին խաչեր:

Բայց ինչպէս որ գրուած է՝ Ինչ որ աչքը չէ տեսած, ականջը չէ լսած, ինչ որ մարդուն սիրտը չէ ինկած, Աստուած պատրաստած է զինք սիրողներուն: Աստուած զայն մեզի յայտնեց իր Յոգիով եւ Յոգին կը քննէ ամէն բան, մինչեւ իսկ Աստուծոյ խորութիւնները: Մարդոցմէ ո՛վ



գիտէ մարդու սրտին գաղտնիքները, եթէ ոչ Յոգին, որ կը բնակի մարդուն մէջ: Նմանապէս Աստուծոյ խորհուրդները ո՛չ ոք գիտէ, բայց միայն Աստուծոյ Յոգին: Մենք չառիւնք այս աշխարհի հոգին, այլ՝ Յոգին, որ Աստուծոյ է, որպէսզի ճանչնանք ինչ որ Աստուած պարգեւեց մեզի: Եւ ինչ որ կը խօսիւք, ո՛չ թէ մարդկային իմաստութեան խօսքերով է, այլ՝ վարդապետութեամբ Յոգիին կը բացատրենք հոգեւոր բաներ անոնց, որոնք Յոգին ընդունե-

ցան: Ընչաւոր մարդը չ'ընդունիր ինչ որ Աստուծոյ Յոգիէն կու գայ, իրեն համար յիմարութիւն կը թուի եւ չի կրնար զայն ըմբռնել, որովհետեւ միայն հոգեպէս կարելի է քննել զայն: Իսկ հոգեւոր մարդը կը դատէ ամէն բան եւ չի դատուիր ո՛չ մէկէն:

Ալէլուիա, Ալէլուիա,

Դուն պիտի կանգնիս եւ գթաս Սիոնի, եկած է ժամը, ժամանակը հասած է որ գթաս անոր:

(Սղմ. 101, 14)

Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ ՍԵՐՆ ՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (Յովհ. 14, 15-24)

«Եթէ կը սիրէք զիս, պատուիրանները կը պահէք: Եւ ես պիտի աղաչեմ Զօրս, որ ուրիշ Մխիթարիչ մը տայ ձեզի, որպէսզի ձեզի հետ բնակի յաւիտեան, ճշմարտութեան հոգին, զոր աշխարհ չի կրնար ընդունիլ, որովհետեւ ո՛չ կը տեսնէ զինք, ո՛չ ալ կը ճանչնայ, բայց դուք կը ճանչնաք զինք, որովհետեւ ձեզի հետ կը բնակի՝ ձեր մէջն է: Որք պիտի չթողում ձեզ, դարձեալ կու գամ ձեզի: Քիչ մը ժամանակ ետք, ա՛լ աշխարհը պիտի չտեսնէ զիս: Բայց դուք պիտի տեսնէք զիս, որովհետեւ ես կ'ապրիմ եւ դուք ալ պիտի ապրիք: Այն Օրը, պիտի գիտնաք թէ ես Զօրս մէջն եմ, դուք իմ մէջս ու ես՝ ձեր մէջ: Ով որ ունի իմ պատուիրանները եւ կը պահէ զանոնք, ան է որ կը սիրէ զիս: Ով որ զիս կը սիրէ՝ պիտի սիրուի Զօրմէս, ես ալ պիտի սիրեմ զինք եւ ինք՝ զինքս պիտի յայտնեմ անոր»: Յուդա, ոչ Իսկարիովտացիս, ըսաւ անոր. «Տէ՛ր, ինչո՞ւ համար ինքզինքդ մեզի պիտի յայտնես եւ ո՛չ աշխարհին»:

Յիսուս պատասխանեց. «Եթէ մէկը կը



սիրէ զիս, կը պահէ իմ խօսքերս, եւ Զայրս պիտի սիրէ զինք եւ պիտի գանք անոր եւ մեր բնակարանը հաստատենք անոր մէջ: Իսկ ով որ չի՛ սիրեր զիս, խօսքերս ալ չի՛ պահեր. եւ խօսքերս, զորս կը լսէք, իմս չեն, այլ Ասոր, որ զիս դրկեց...»:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Տօն Ամենասուրբ Երրորդութեան

«Լոյս երբեակ, եւ մի անբաժանելի՛ Սուրբ Երրորդութիւն» (Շարական)

Սիրելի հաւատացեալ,

Այսօր Եկեղեցին կը նշէ Ամենասուրբ Երրորդութեան Տօնը: Ըստ մեր Եկեղեցւոյ դաւանաբանութեան, Աստուած Ամենասուրբ Երրորդութիւն է, մէկ Աստուած՝ երեք Անձերու մէջ՝ Զայր Աստուած, Որդին Աստուած եւ Զոգին Սուրբ Աստուած: Ուստի, Ամենասուրբ Երրորդութիւնը, Ամենասուրբ Աստուածութեան երեք անձերն են:

Աստուած անսկիզբ է եւ անեղ: Անըսկիզբ՝ սկիզբ կամ ծագում չունեցող, այ-

սինքն՝ ինքնագոյ է: Իսկ անեղ՝ անըստեղծ, այսինքն՝ ոեւէ մէկ ուրիշ անձի մը կողմէ չէ ստեղծուած:

Որդին՝ ծագում կամ ծնունդ է Զօրմէն: Սուրբ Զոգին՝ անեղ, անժամանակ ու կատարեալ է: Անիկա բխած է Զայր Աստուծմէ, Էակից է Զօրն ու փառակից Որդիին:

Երեք անձերուն միջեւ երբեք չկայ մեծ կամ փոքր: «Այս է հաւատքի կատարելութիւնը՝ Զայրը, Որդին եւ Սուրբ Զոգին ճանչնալ երեք անձ եւ մէկ Աստուած, Անոնցմէ ոչ մէկուն առաւել կամ նուազ չհամարել, կամ առաջ կամ յետոյ, այլ՝ հաւասար եւ ամեն ինչով մի-

անման եւ նոյն բնութեամբ» (Խոսրով, Մեկն. Պատ.):

Սուրբ Գիրքը մեզի կ'ուսուցանէ թէ՛ «Յայրը եւ ես մէկ ենք: Դուն չե՞ս հաւատար, որ ես Յօր մէջ եմ, Յայրը՝ իմ մէջս»:

Ագաթանգեղոսի երկին մէջ կը կարդանք Սուրբ Գրիգոր Լուսաւորչի վերաբերած խօսքը՝ «Երեք կատարեալ Անձեր, բայց մէկ կատարեալ կամք: Մէկ իսկութիւն, մէկ եութիւն, մէկ Աստուածութիւն, մէկ Աստուածային զօրութիւն»:

Սուրբ Ներսէս Շնորհալին Սուրբ Երրորդութեան մասին կ'ուսուցանէ՝ «Մէկ բնութիւն, մէկ Աստուածութիւն, մէկ իշխանութիւն համապատիւ եւ զուգափառ: Ոեւէ մէկէն չստեղծուած, սկիզբ եւ վերջ չունեցող, այսինքն՝ յաւիտենապէս»:

Եւ Վարդան Այգեկցիին հետ կ'եզրափակենք՝ «Կատարեալ հաւատքով, անթերի մտքով, անկեղծ սիրով, գոհացական երգով եւ քաղցր ձայնով կ'օրհնենք, կը փառաւորենք եւ կը բարեբանենք բոլորին կողմէ օրհնուած եւ ամենաբարի Ամենասուրբ Երրոր-



դութիւնը՝ բոլոր ստեղծեալներու Արարիչը ու Ստեղծողը, անմատոյց Լոյսը, ուր չկայ նուաստութիւն ու մեծութիւն, ծերութիւն ու մանկութիւն, աւագ ու կրտսեր, այլ Երեք կատարեալ Անձեր՝ միացած Մէկ անբաժանելի Բնութեան մէջ, մէկ կամք եւ մէկ Աստուածութիւն, մէկ թագաւորութիւն եւ մէկ զօրութիւն»: Ամէն:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Լամիս Մարիա Ֆատի Եասին՝ 13 մայիս 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Ժորժ եւ Անճելինա Շարպէլ Պէքաճեան՝ 20 մայիս 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Միկէլ Մկրտիչ Աթիքեան՝ 21 մայիս 2017 - Ս. Խաչ եկեղեցի

ՍՈՒՐԲ ՊՍԱԿ

Կարօ Հրաչ Շահպազեան ընդ Ալին Եսայի Քէլեան՝ 20 մայիս 2017 -
Ս. Գրիգոր լուսաւորիչ- Ս. Եղիա
Պաշիր Սարգիս Խաչատուրեան ընդ Լինտա Անդրանիկ Մակսսեան՝ 21 մայիս 2017
- Զմմառու Տիրամօր վանք

ՄԱՀԱԶԴ

Էլլին Է՛րեմ Մեյքրոնեան՝ 30 մայիս 2017 - Ս. Խաչ եկեղեցի